

Տարեկան գինը 10 րուբլի է և տարվանը 6 րուբլի  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի վարձարանները:

Չարաբարադարի գինը և ուղղակի  
Դիմում. Редация „Миръ“

# ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաջօրե 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարությունները ընդունվում են ամեն լեզուով:

Հայտարարությունների համար վճարում են  
խաբանչիկը բառին 2 կոպեկ:

## ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Բաղադրական մասնաձևերը:—Ներքին տե-  
սությունները հերթափոխվում են Նախկին Մոսկ-  
վայից: Ներքին լուրերը:—Հայտարարությունները:  
—Բանասիրական: Նախկին Գերմանիա-  
յից:

## ԲԱՆԱԲԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԵՐ

Չոր նախելով, որ եւրոպական  
պետությունները ներկայացրին  
Թիֆլիսյան համաձայն գրություն-  
ներ Չեքոսլովակիայի հողային հար-  
ցի մասին և Հայաստանի բարե-  
նորոգումների մասին, այնուամե-  
նայնիս երևում է որ կոմս Գը-  
րենիլ մեծ յոյս չունի թէ այդ  
գրությունները ներգործություն  
կունենան Բ. Գրան վրա: Մի  
հանդիսաւոր ճաշի ժամանակ Գը-  
րենիլ յայտնեց որ չընայելով թէ  
պետությունների միմեանց մէջ ե-  
ղած խաղաղութիւնը կը պահ-  
պանուի, բայց դարձեալ պետու-  
թիւնների շահերը արեւելեան  
խնդրի մէջ տարբեր են երևում:  
Արտաքին գործերի միջնորդը ա-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԱԽԱԳ ԳԵՐՄԱՆԱՅԻՑ

- 41) Գանձապետին պաշտօնը և ընկերաց բա-  
ժինները ստանալիս կենտրոնացնելով, որոշման  
հետ եղած գործողութիւնները կատարել, ընկերու-  
թեան եկամուտը հսկել և կենտրոնական ժողո-  
ւոյ ու գիւմարի սահմանաւ իրաւասութեամբ որո-  
շուած ծախքերը մատակարարել:
- 43) Գանձապետը ուղղակի և անհատապէս պա-  
տասխանատու ըլլալով կենտրոնական ժողովի,  
գիւմարի, ներկայացուցչաց կամ ճիւղերու մասնա-  
խմբաց և այլ և այլ կողմէն յանձնուած ամեն արժողու-  
թեանց համար, պարտի պահանջով և պատճենապէս  
վաւերացնելով կաշիստորութիւնը մը տալ իրեն  
յանձնուած արժողութիւններն անցապաղ ընկերու-  
թեան գրամատոն յանձնել և 100 ֆրանկէն աւելի  
ստակ չը պահել իւր քովը, ապա թէ ոչ իւր թի-  
րութեամբ և անհոգութեամբ հասուցած վնասը  
ինչ որ ալ ըլլայ, ինքն անձամբ կամ իւր կաշիստ-  
ւորը պարտի տուժել:
- 43) Գանձապետը, կենտրոնական ժողովով կամ  
գիւմարի որոշած մի ծախքը մատակարարելու  
համար, պարտի առեւտրային, առեւտրային և  
համարակալ ստորագրելու և ընկերութեան կի-  
քովը վաւերացնելու արտօնագիր մ'ունենալ, առանց  
որոյ ըրած ծախքերը ընդունելի չը լինելով, ինքն  
անձամբ կամ կաշիստուրը պարտի տուժել:
- 44) Համարակալին պաշտօնը է կենտրոն հայի-  
տեալը ըսնել, առեւտրային և առեւտրային  
հետ անդորարարներն և արտօնագրերն ստորագրել,  
ընկերութեան գրամատոն յանձնուած արժո-  
ղութեան վրայ հսկել և ամեն երեք ամիս ընկե-

ւելացրեց, որ եթէ ահարին կը  
լինի պահպանել պետութիւնների  
համաձայնութիւնը, այն ժամանակ  
մեղաւորը Նիդլան չի լինի, որ  
չաջողվեց ցանկացած ներգործու-  
թիւն ունենալ Թիֆլիսի վրա:  
Ի հարկէ անդրեւեան միջնա-  
տրութիւնը արեց ինչ որ կարո-  
ղացաւ արեւելեան խնդրի վերա-  
բերութեամբ, և ոչ որ մեղադրել  
նրան չի համարձակվի, բայց այնու-  
ամենայնիս լորդ Գրենիլի կող-  
մից դա մեծ անտակտութիւն է  
և մեծ սխալ է յայտնել հրապա-  
րակապէս յուսահատական մտքեր,  
երբ գործը դեռ ևս աջողված չէ:  
Հէնց որ Կ. Պօլսում կիմանան  
թէ Գրենիլ կոմսը ինքն յոյս չու-  
նի թէ Եւրոպայի պահանջումները  
կաջողվեն, Բ. Գրանը աւելի էլ  
կամակոր կը դառնայ և չի ուղե-  
նայ որ և է զիջումներ անել եւ-  
րոպական պահանջումներին... Եւ-  
անդրեւեան միջնատրութեան այդ  
տեսակ ընթացքը խրախուսիչ չի լի-  
նի Գօշենի համար, որին յանձնված  
է ճնշում ներգործել Բ. Գրան վրա:

- րութեան գրամական միջակը կենտրոնական ժողո-  
ւոյ ներկայացնել գիւմարի վաւերացնելով:
- 45) Գործակատար-խորհրդականաց պաշտօնը է  
Գիւմարի կողմէն յանձնուած պաշտօնները առան-  
ձին, կամ գիւմարի որոշմամբ անդամի հետ ըն-  
կերակցութեամբ կատարել և իրանց գործառնու-  
թեան կամ քննութեան արդիւնքը գիւմարի տեղեկա-  
գրել:
  - 46) Գիւմարի կաշիստը չունի առանց կենտրո-  
նական ժողովոյ հաւանութեամբ, թուղթ, գրիչ,  
մեքենա, տետր, պահարան, ժողովատեղոյ և նա-  
խկապ ծախք, և այլ սոցա նման առօրեական  
անհրաժեշտ պիտոյքներէ դուրս որ և է ծախք  
մշնելու:
  - 47) Ստիպողական պարագաներու մէջ գիւմար  
իւր պատասխանատուութեամբ որոշումներ կրնայ  
տալ, բայց պարտի անմիջապէս գումարելի կեն-  
տրոնական ժողովոյ հայիւ և բացառութիւն տալ  
իւր որոշմանց վրայ:
  - 48) Գիւմարի որոշումները վաւերական համա-  
րելու համար գէթ իւր վեց անդամոց հաւանու-  
թիւնն անհրաժեշտ է:
  - 49) Եթէ գիւմար իւր անդամոց միոյն վրա  
անվստահ լինի, յետ քննութեան կրնայ անոր  
հրաժարումը անմիջապէս կենտրոնական ժողովոյ  
ներկայացնել:
  - 50) Եթէ գիւմարի անդամներէն մին առանց  
բանաւոր պատճառի և կանխաւ գրաւու ազգա-  
բարութեան յաջորդաբար չորս անգամ գիւմարի նիս-  
տերէն բացակայ գտնուի, հրաժարելով կ'ամբարուի:
  - 51) Ընկերութեան վերաբերելով ամեն տեսակ  
պաշտօնական գրութիւնը, որը Գիւմարի կը ըրիսն,  
առանց առեւտրային կամ փոխ-առեւտրային և  
առեւտրային ստորագրութեան և ընկերութեան  
կիցոյն վաւերական չեն համարուիր:
  - 52) Ընկերութեան երկու կիցներէն մին մաս-  
նաւոր տփին մէջ փակուած և գիւմարի ամբողջ  
անդամոց կողմէն զմուռած գործակատար-խոր-  
հրդականաց միոյն քով կը պահուի և գործածելին  
փոխ-առեւտրային քով կը մնայ:

Ընկերը հաւատացած էին որ  
եթէ ընդհանուր եւրոպական հա-  
մաձայնութիւնը ոչինչ ներգործու-  
թիւն չի ունենայ Թիֆլիսի վե-  
րա, այն ժամանակ Նիդլան ա-  
ւելի էլ մեծ եռանդով մենակ  
կը շարունակէ գործը և մե-  
նակ գլուխ կը բերի այն, ինչ որ  
եւրոպական պետութիւնների հետ  
համաձայնութեամբ չը կարողացաւ  
գլուխ բերի:  
Բայց ոչ որ չէր սպասում որ  
առաջին անաջողութիւնից յետոյ,  
Նիդլան պետք է յետ կանգնի  
իր սկսած գործից, ասելով՝ ես ա-  
րեցի ինչ որ կարողացայ, այժմ  
խղճմունքս մաքուր է, ես ձեռ-  
ն երս լուսանում եմ...  
Նիդլան եթէ ուզենար, կա-  
րող էր այժմ և մենակ ներգոր-  
ծել Թիֆլիսի վրա և անշուշտ  
բոլոր պետութիւնների համակրու-  
թիւնը կը փաստակէր իր համար-  
ձակ քայլի և արդար պահանջ-  
ների համար:

Գ. Ա.

- 53) Գիւմարի անդամ ըլլալու համար, ընտրուելի  
քան և մէկ տարին լրացուած ըլլալու է:  
Բ. Հասցիք և ստացուածք:
- 54) Ընկերութիւնը ընկերաց ամսավճարէն և  
մասնաւորաց նուէրներէն զատ, նորանոր հայոց-  
թից միջոցներու կրնայ դիմել կենտր. ժողովոյ ո-  
րոշմամբ:
- 55) Ընկերութիւնը իւր ամբողջ հասցիցից հա-  
րիւրիս յիսուր իրի պահանջով դրամագրութիւն կը  
պահէ իւր դրամատան մէջ յանուն և ի հաշիւ ըն-  
կերութեան և եւրոպական տէրութեանց ապահով  
արժեթղթով վերածելով, զորս ոչ ոք առեւտրու ի-  
րաւունք ունի, և մնացեալ յիսուր պատրաստ դը-  
րամ պահելով նոյն դրամատան մէջ, բերած չա-  
հովն հանդերձ իւր նպատակին և կարեւոր ծախուց  
գործ կածէ:
- 56) Ընկերութիւնը իւր որդեգրաց ամեն պէտ-  
քերը հողաւոր պարտաւորեալ ըլլալով իւր պատ-  
րաստի գրամին մէջ որդեգրի մը ուսման չըջանին  
ամբողջութեան համար վճարուած գումարը մինչև  
որ հաւաքած չըլլայ, ուրիշ որդեգրի մը բերելու  
չը կրնար ձեռնարկել:
- 57) Ընկերութիւնը ամեն հայաբնակ մեծ քա-  
ղաքաց մէջ իւր ներկայացուցիչներն ունի, առ որս  
պէտք է դիմեն նոյն քաղաքի ընկերները, իրենց  
բաժինը վճարելու, անդորարարներն ստանալու  
և առաջարկութիւնները ներկայացնելու համար:
- 58) Կենտրոնական ժողովը գիւմարի կողմէն  
պատրաստած ընտրելիաց եռասպարիկ և սրբազը-  
րիկ ցանկի մը մէջէն կրնար իւր ներկայացու-  
ցիչները, որոց թիւն առ նուազն երկուր է մի և  
նոյն քաղաքի համար:
- 59) Ներկայացուցիչը իրենց ընտրութիւնն ըն-  
դունած օրէն կենտրոնական ժողովոյ անդամ են,  
նորա գործառնութեանց, իրաւանց և պարտուց կը  
մասնակցեն և պարտին ըստ հաճոյից Ցրդ կամ  
15 րդ, 15, 16, 17-րդ յօդուածոց միոյն տրամա-  
դրած ընկերական պարտքերը կատարել:
- 60) Ներկայացուցիչը իրաւունք ունի իրենց

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՎՐԱ

- Աւելորդ չեմ համարում վերոգրեալները  
ընդանդակելով ցոյց տալ կարգաւ այն զիւրա-  
ւոր պայմանները, որոնք շերամատան վրա  
վնասակար ազդեցութիւն են գործում: Սրանց  
վերաբերվում են հետեւեալները.
- 1) Արեւի չափազանց տաքութիւն  
նը, որից որդերը խորշում են ցերեկով, իսկ  
առաւօտեան արեւի ճառագայթները նորանց  
կենդանացնում և զուարթացնում են:
  - 2) Օդի բարեխառնութեան խիստ  
բարձր ասիւ կամ ցածր ասիւ: Շերա-  
մատան մէջ շերմութիւնը շարունակ պէտք  
է լինի ոչ պակաս 15-ից և ոչ աւելի 20-ից,  
այսինքն այնքան տաքութիւն, որքան հաճելի  
է մարդու մարմնին: Շերմութեան բարձրա-  
ցնելը առաւել վնասակար է քան ցածրացնե-  
լը. շերմները ցրտից այնպէս հեշտ չեն կո-  
տորվում, ինչպէս տաքութիւնից:
  - 3) Ընդմիջանց քամին չափազանց  
կորստաբեր է որդերի համար, թէև  
շերամատան մէջ օդի թույլ շարժումը անհրա-  
ժեշտ է՝ որդերից և տերեւներից արտաշնչ-  
չվող գազերը և այլ վնասակար արտաշնչու-  
թիւնները փչացնելու համար:
  - 4) Սաստիկ որոտմունքը և կայ-  
ծակ շերմների վրա այն աստիճան ազ-  
դում են, որ նոքա դարբարում են ուսուցից,  
շատ անգամ զերկում են և ենթարկվում հի-
- գործառնութեան դիւրութեան համար չըջակայ  
քաղաքաց մէջ ազդարարաբար գործող օժանդակ-  
գործակատարներ ունենալու, որոց համար ներկա-  
յացուցիչը պատասխանատու են: Օժանդակ ներ-  
կայացուցիչը պարտին նոյնպէս ընկեր գրուի ի-  
րենց ընտրութիւնն ընդունած ժամանակ, և իրենց  
հրահանգներն ու տեղեկութիւնները ներկայացու-  
ցիչներէն սպասել և նոյնա հետ թղթակցել:
- 61) Ներկայացուցիչը՝ ընկերութեան առաջար-  
կութիւն մ'ընդունելէ և հաւանութիւն տալէ վեր-  
ջը՝ պարտին նոյն ընկերով յատկութեանց և պայ-  
մաններու վրա համաձայն և ճշգրիտ տեղեկագրով  
մը կենտրոնական ժողովոյ գիւմարի վաւերացմամբ  
ներկայացնել:
  - 62) Ներկայացուցիչը պարտին ընկերաց ամսա-  
վճարէն և մասնաւորաց նուէրներէն զոյացած  
գումարը կամ ընկերութեան դրամատան նոյն քա-  
ղաքի ճիւղին յանձնել մշտապէս և կամ ամեն ե-  
րեք ամիս ուղղակի կենտրոնական ժողովոյ գիւ-  
մարի յղել, եթէ նոյն քաղաքի մէջ դրամատան մը  
չի նշանակուած, ասկան եթէ այս միջոցիւ հա-  
ւաքած գումարը 100 ֆրանկ անցնի, անմիջապէս  
դրամատան մը մէջ ի շահ անելու են, որպէս զի  
եղած շահովը փոխադրութեան ծախքերը վճարե-  
լով, մայր-գումարին վնաս չը հասնի:
  - 63) Ներկայացուցիչը բարոյապէս պատասխա-  
նատու են իրենց դիտողութիւնները, քուէները և  
ընկերաց առաջարկութիւնները անցապաղ կեն-  
տրոնական ժողովոյ գիւմարին յղելու, որպէս զի ըն-  
կերութեան գործառնութեանը վնաս չը պա-  
տահի:
  - 64) Զիւղը և ճիւղերու մասնախումբը:
  - 64) Եթէ որ և է քաղաքի ընկերաց թիւը՝ բացի  
ներկայացուցչաց, առ նուազն յիսուր հասնի, ըն-  
կերութեան մէկ ճիւղը կը համարուի, այն ատեն  
նոր ճիւղը կազմող յիսուր ընկեր իրաւունք կը  
ստանան կենտրոնական ժողովոյ ներկայացուցչաց  
թւոյն հաւասար թուով ներկայացուցիչներ ընտրե-  
լու, որոնց ընտրութիւնը կը կատարուի ըստ յօ-  
դուածի 21-րդ:







կամ լինեն մի որպիսի և իցէ խառնով։ Բայց այս Եւրոպայի հասակի վերջերքում կոկոն շինելու յարմար տեղ չը գտնելուց որդեկերը սպմում գեղնում և ստակում են, բայց յաճախ պաճուճապատի են փոխվում առանց կոկոն հիւսելու։

Մի քանի խօսք էլ շերամի սերմ հանելու վերաբերութեամբ։

Որովհետեւ այս գործողութիւնը ևս մեր ժողովրդի համար բոլորովին անծանօթ չէ, ուստի առանց երկարաբանութեան այստեղ ես ցոյց կը տամ միայն մի քանի գլխաւոր կանոններ, որոնց վրա ուշադրութիւն դարձնելը անհրաժեշտ է։

Սերմացու կոկոնները ընտրելուց պէտք է ի նկատի ունենալ՝ որ իգական կոկոնները միշտ աւելի խոշոր, աւելի կողրածեղ, աւելի բութ և աւելի ծանր են, քան արականները։

Ներու տեսակներին էլ պէտք է հաւատար չափով ընտրել։ Կոկոնները ընտրելուց յետոյ նորանց պէտք է կտաւով ծածկած սեղանի վրա տարածել և թիթեռներ հանելու համար նրանց միջից նորէն ջուրով միայն այն պիտի ներս, որոնք խիստ կատարեալ ձև ունեն։

Աւելի լաւ է՝ եթէ հէնց սնուցանելու սկզբից սերնդացու շերամները՝ առանձին տեղ և առանձին խնամքով սնուցանեն, այն է նրանց աւելի ընդարձակութիւն և աւելի ընտիր սնունդ տան։

Արական կոկոնները առանձին թղթի կամ կտաւի վրա պէտք է առնել, իգականները առանձին։

Մթին գոյն ունեցող, դեղնած, թոյլ և բաւականաչափ աղուամաղով չը ծածկած թիթեռները պէտք է դէն ձգել։ Առաւել լաւ պէտք է համարել այն արունները, որոնք իգական բաժնի մէջ դուրս կը դան, իսկ արական բաժնում դուրս եկող էրբը թոյլ և անպէտք են։ Մինչ թիթեռները ցամաքելը, 2—3 ժամերի ընթացքում արունները էգերից պէտք է բաժանած լինեն։ Ձուգաւորումը պէտք է 6 ժամից պակաս և 10 ժամից աւել չը աւել։ Եթէ գոյգերը 6 ժամ չը լրացած բաժանվելու լինեն, պէտք է նորէն միմեանց մօտեցնել և կամ էգի մօտ նոր արու թիթեռ մօտեցնել։ Արուններին հետեւալ օրը երկրորդ անգամ կարելի է դործ ածել միայն այն դիպուածութեամբ, երբ նոր արուններ չը լինեն դուրս եկած։ Նրանց պէտք է ծախուղէնուոր խուփելով թղթէ արկղիկներով մէջ պահել։ Նրորող ծրում ածած սերմերը լաւ չեն լիւնում, ուստի թիթեռներին մինչ այն օրն էլ պահելը հարկաւոր չէ։

Տաք և խոնավ սենեակների մէջ թիթեռներին համար աւելի հեշտ է սերմ ածել, քան զով և բոլորովին ցամաք սենեակների մէջ։

Այսուհետ ինձ մնում է կրկին անգամ դառնալ դէպի մեր շերամապահները՝ առաջարկելով նրանց մի համեստ խորհուրդ։

Ինչպէս յայտնի է՝ շերամի գլխաւոր կորստաբեր հիւանդութիւնը ժառանգաբար է անցնում, դրա համար էլ շերամապահի ամենապիտան և հոգատարութիւնը այն է լինում, որ հիւանդոտ սերմ չը պահէ։ Բայց մերայինք արդէն փորձով գիտեն թէ որքան դժուար է այս բանից զգուշանալը։ Տեսնում ես մի որ և իցէ անձ որ և իցէ մի օտար երկրից, ով գիտէ ինչ միջոցներով ձեռք ձգած սերմ է բերում և հազար ու մի երկուսներով հաւատացնելով, որ այդ սերմը այս ինչ կամ այն ինչ անունի տեսակից է՝ իր ուզած գինով ծախում է ժողովրդեան վրա։ Յոյսը Աստուծոյ վրա դրած՝ խղճմամբ շերամապահը պահում է այն սերմը՝ խնամում մեծացնում է շերամներին, որոնք կոկոն շինելու ժամանակին մօտեցած՝ երեւան հանելով ժառանգութեամբ ստացած իրանց պակասաւորութիւնը՝ սկսում են կոտորվել և օդը հանել շերամապահի բոլոր յոյսերը, բոլոր աշխատութիւնը, դեռ լաւ է եթէ առաջին

հասակներում կոտորվելին։ Ահա այս հանգամանքն աչքի առաջ ունենալով՝ ցանկալի էր որ մերոնք իրանք սկսեն պահելու սերմ հանել ինչպէս անում էին առաջ։

Գիտեմ, իմ սիրելի հայրենակիցներ, որ դէմ դուք ինձ պիտի պատասխանէք, որ այժմ այդ բանը անկարելի է, որ այդ չէ յաջողվել, բայց հաւատացէ՛ք, որ այդ մի մոլոր կարծիք է ձեր մէջ, այդ մի նախապաշարմունք է։ Ինչու դուք պէտք է կարծէք, որ աշխարհիս ով գիտէ ինչ քունջ ու պուշախում մի որ և իցէ բաղդախորին այդ բանը կը յաջողի, իսկ ձեզ չը պէտք է յաջողի, որ ի ծննդեկէ նուիրած էք այդ գործին։ Ես հաւատացած եմ, որ այդ բանը կը յաջողի ձեզ և անպատճառ կը յաջողի հարկաւոր է միայն մի փոքր աւելի համոզութիւն և աւելի եռանդ ու անհոգութիւն։

Ես չեմ աւելի որ հէնց առաջին անգամից դուք բոլորը ձեր հանած սերմից պահէք, հոգ չէ, կարող էք դեռ մի քանի ժամանակ օտար սերմ պահել, իսկ միևնոյն ժամանակ էլ՝ թէկուզ փորձի համար՝ մի փոքրիկ մաս ձեր հանած սերմից պահեցէք, մինչև որ դուք բոլորովին կը համոզվէք այդ բանի յաջողութեան մէջ։

Ս. Մ.

ՆԱՍՏԱԿ ՄՐՈՍԿՎԱՅԻՑ

30 մայիսի

Մայիսը հասաւ իր վախճանին։ Համալսարանական քննութիւնները վերջացան։ Նրկու ամսից աւելի սենեակներում փակված ողորմելի նահատակները լոյս աշխարհ դուրս եկան։ Աղատվեցի և ես։ Թող կը տայ ինձ ընթերցողը մի թիթեռ հայեացք գցել ուսանողական կեանքի այդ տաք միջոցի վրա։ Ես ուշադրութիւն եմ դարձնում այդ աննշան հանգամանքի վրա, որովհետեւ նա պարզ ցոյց է տալիս, որ մի քանի բաների մէջ ուսանողները շատ առաջ չեն գնացել գիմնադաստիարակ, որ նրանց մէջ դժբաղդաբար դեռ մնացել է այն երեխայական թեթեւութիւնը, որ յատուկ է և մի և նոյն ժամանակը ներքին փոքրիկ աշակերտներին։ Հարկաւոր է շատ մօտիկ ծանօթ լինել ուսանողների հոգեկան դրութեան հետ քննութիւնների ժամանակը, որ հասկանալ, թէ որքան դատարկութիւն, որքան անմիտ ինքնասիրութիւն, որքան զգուշ ֆանֆարոնութիւն է պարունակվում նրա մէջ \*)։ Քննութիւնները, — դա կարելի է ասել մի կատարել որսորդութիւն և թունաւորանքի յետադիւր։ Ամեն մեկը աշխատում է լաւ բաղլի տառնալ, և այդ աշխատութիւնը անհրաժեշտ ծայրայեղութեան է հասնում։ Գուք կը տեսնէք այնպիսի անհատներ, որոնք չը բաւականապէս փոխարկական կամ կանդիդատական թուանշաններ ստանալով, պրոֆեսորներին երեւը վեր են բերում, կուտում են, սկսանդներ են անում նպատակաւոր, դուռնազանցող, իդէալական 5-երը ստանալու համար։ Նրանց հարկաւոր է այդ պանծալի թուանշանը նրա համար միայն, որ ամեն տեղ պատահած ժամանակը քննութեան վրա խօսք ընկնելիս մի առանձին ինքնահաւանութեամբ լքը բողբոջով յայտնեն բոլորին, թէ ստացել են ամեն առաւելակներից քերքը պարտքը, — այդ է նրանց փափակը, այդ է նրանց փառքը, որ և բաղձալքը, այդ են նրանց համալսարանական կեանքի ամենաթանկագին բույնները, այդ է նրանց վերացում, առաջացում և ստիպում նայել իրանցից ցած բաղլի ունեցողների վրա, ինչպէս ճանձ ու մեղրի վրա... Գուք կը տեսնէք այնպիսի անհատներ, որոնք բարձր թուանշան ստանալուց յետոյ ամեն տեղ, ամեն մի քայլափոխում, ամեն մի պատահող ընկերով կը յայտնեն իրանց յաջողութեան լուրը, կը յայտնեն ոչ միայն պատահած իրողութիւնը, այլ նրա պօշից կապելով մի ցնդաբանական առաւելութիւն ինչպէս պրոֆեսորը ապշած էր մնացել նրանց հիմալի պատասխանից, ինչպէս նա պիտի սեղմել էր նրանց ձեռքերը ամբողջ լսարանի առաջ, և յայտնել էր թէ նա բաղձաբեղ աշակերտներ, ինչպէս ներկայ եղող ուրիշ պրոֆեսորները մեկ մեկու յետեից մօտացել են և ձեռք են տուել նրանց յայտնելով նոյնպէս իրանց սրտի խորին հրճուանքը... Եւ այդ ցնորական պատ-

\*) Բացառութիւններ ամեն բանի մէջ կան։

մութիւնը կրկնվում է անթիւ ու անհամար անգամ, կրկնվում է անամոթաբար, բերնից բերան է ընկնում, ծիծաղելու և ծաղրելու նիւթ դառնում... Գուք կը տեսնէք այնպիսի զառաւմալ ուսանողներ, որոնք եթէ պակակած լինէին անշուշտ մի քանի թուանք կուեննային գիմնադաստիարակ, — դուք կը տեսնէք, որ նրանք մի աւելորդ թուանշանի համար, մի փոքրիկ ինքնահամար հոգի կը տան, կը տանվեն, կը նահատակվեն, ամեն մի պրոֆեսորի առանձին կը հաւատացնեն, թէ շատ սիրում են նրա առաւելալով պարագիւր, վերջապէս կը ստանան ցանկացածը, ուրախութեանց ծուլ ծուլ կը լինեն, Աղբար Աղամի ինչ պէս մաղալաւ կը տան, կը թափան, կը ցնծան և ամեն անց ու դարձ անողին զգանք ու սարս կանեն, զահա կը տանեն իրանց պատահած բողբոջութեան պատմութիւնը անկողի։ Գուք մի նայէք նրանց տարբեր վրա, նրանք կատարեալ երեխայական բընաւորութիւն ունեն, երեխայ են, որովհետեւ չեն հասկանում թէ ինչպէս նրանց ծաղրում են ընկերները։ Մի և նոյն ժամանակը անկարելի է նրանց մտաւորապէս անզարգացած համարել, անկարելի է, որովհետեւ նրանք շատ կարգում են, գրում, խօսում, — նրանք խրատում են մինչև անգամ ուրիշներին, որ չաշխատեն երեխայաբար թուանշանների յետեից ընկնել, նրանք ծաղրում են այսպիսիներին, երեխայ են անուանում... Այդ սարսափելի հակասութիւնը ամենապիտանաւոր ապացոյց է ամենախորին դատարկութեան...

Գուք կը տեսնէք այնպիսի անհատներ, որոնք ամբողջ արար պարապում են, սովորում, անգիր անում, իսկ քննութեանը բարձր թուանշան ստանալուց յետոյ ձեռք կը հաւատացնեն, երբում կրակը կը ընկնեն թէ ընդամենը մէկ անգամ էին կարողացել լեկցիաները։ Ի՞նչ է ուզում դրանով ասել պատեւիլ ստախուր, — ի հարկէ այն, թէ տեսնէք ես ինչպէս հանճարեղ գլուխ ունեմ, ինչպիսի հրաշալի ընդունակութիւններ են պարունակում այդ հազուադէպ գլխի մէջ... Գուք նայեցէք թէ ինչպէս այդ թանգազին գլխի տէրը լքի տակ ծիծաղում է իրանցից վատ նշաններ ունեցողների վրա, ինչպէս բեղերը ոլորելով ձեռքը կողքին դրած աչքերը կուշ ածելով լսարանում է նայել հասարակ մահկանացուների վրա, հաստատ համոզված լինելով, որ իր և նրանց մէջ մի և նոյն անհոգութիւն կայ, ինչպէս երկնքի և երկրի մէջ։ Նա յիմարաբար համոզված է նոյնպէս, որ բոլոր չըջապատողները երկրպագում են նրան, դարձանում են, նախանձուտ են, հիւանում են նրա բաղձալքաւոր քանքարների վրա... Ընկերները զղվում են, անհամբերութեանց յուսահատվում են, երբ որ նա սկսում է իր անհոգութիւն անվերջ, այսմաւոր լի չափ պատմութիւնը իր հանճարի մասին, նրանք աշխատում են խօսքը փոխել, բայց նա իր էջն է քշում, — նրա հաստ գլխում խռնամուկիւն ասած բառը երբեք տեղ չէ ունեցել։

Գուք կը տեսնէք այնպիսի անհատներ, որոնք քննվելուց 10 րոպէ առաջ դողողում են, աղաղակում են, ողորում են, լաց են լինում, թէ ոչինչ չը գիտեն, բայց քննվելուց և 5 ստանալուց յետոյ խօսաբար նրանց, տես ինչ զուռնա կը փչեն, — հը, մեր աղա—հարցնում էք դուք նրանցից մէկին—էդ ճից էր, որ ասում էիք ոչինչ չը գիտեմ, լաւ արաք արաքալէն պատասխանում էիք—ինչու չը պէտք է պատասխանէի, քանի որ հիմալի գիտէի, խօսում է հերոսը առանց կարմրելու... Գուք ուսերդ վեր էք քաշում և անցիկներում... Գուք կը տեսնէք մի ուրիշին, որ քննութիւնից մի օր առաջ ձեռք կը հաւատացնի, երկինք գետինը վրայ կը բերի, թէ դեռ լեկցիաներին ձեռք չէ տուել, անա հիմալ գիտում է, որ սկիւ սովորել և յոյս ունի մի որ և է 7—8 ժամվա մէջ մօտ 30 թերթ վերջացին—էդ խօ դժուար է, ախբեր, էդ ճից պէտք է անես, հարցնում էք դուք հաստատ իմանալով, որ նա այդ 30 թերթը արդէն վաղուց կուլ է տուել ու մարսել—է՛հ, Աստուած ողորմած է, պատասխանում է նա, և այդ պատասխանով նա կամենում է ասել, թէ դուք նրա վրա մի աչքով մի մտիկ տաք, նրա համար 30 թերթը պատարաստելը մի քանի ժամում խաղ ու պար է։ — Գո՛ւշաղ ես, ախբեր, դո՛ւախ, Աստուած քեզ քո հօր օջախին բաղլի—ցանկանում էք դուք և հեռանում...

Գուք կը տեսնէք մի այլ անհատ, որ քննվելուց առաջ ձեռք կը հաւատացնի, թէ ոչինչ չը գիտեմ, թէ եթէ մի փոքրիկ 3 ստանալով պրոֆեսորի ձեռքերը կը համբուրի։ Գնում է, քննվում, ստանում 3 և... քիթը կախ յետ դառնում—հը, բարեկամ, ինչ ես փախնդ չուռ տուել, դու խօ մի 3-ի համար տաք մատաղ կը մորթէիր—է՛հ, ինչ ես ասում, բոլորը չորս ու հինգ ստացան, միայն ես երեք։ — Գե բաւական է էլի, ախար դու ասում էր ոչինչ չը գիտես—Мало-ли что! պատասխանում է նա և հոտալով հեռանում...

Գուք կը տեսնէք մի ուրիշին որ քննութեանը բարձր թուանշան ստանալուց յետոյ փոքր ինչ բարկացած է վերադառնում տուն։ — Հը, ինչ ես ամպել, հարցնում էք դուք, չը լինի ուզում էիք 8 ստանալ, Նա ձեռք կը պատասխանի, թէ անբաւական է նրանով, որ նրանից վատ իմացողներն էլ մի և նոյն բարձր թուանշան են ստացել...

Շարունակեմ արդե՞ք։ Բաւական է կարծեմ, Բերած օրինակներս չափազանց գեղեցիկաբան են։ Նրանք պարզ ցոյց են տալիս, որ ուսանող երիտասարդութիւնը, նոր մտքերով, վսեմ սկզբունքներով, բարձր իդէալներով վառվող սերունդը դեռ չէ թօթափել իրանից գիմնադաստիարակ ձեռք բերած երեխայական յատկութիւնները։ Եւ թրամներ չեմ տալիս, քարոզ չեմ կարգում, այլ մասնանիչ եմ անում այն տխուր երեւոյթի վրա, այն ցաւալի իրականութեան վրա, որ մի կողմից հակասութիւն է կազմում ուսանողական կեանքի գեղեցիկ կողմերի հետ։ Թող չը կարծեն իմ այս տողեր կարողացող ընկերները, որ ուսանողութեան այդ թոյլ կողմի վրա յարձակվելով ես ինձ բացառութիւն եմ համարում... Ընդհանուր հոսանքի դէմ դժուար է լողալ...

Ս. Գաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք միշտ ասել ենք որ մեր ուսումնական բընութիւնները շատ լաւ կանխին եթէ ուշադրութիւն դարձնէին մեր ժողովրդական բժշկների միջոցներ վրա և այսպիսով կը հարստացնէին գիտութիւնը։ Որինակ ուսումնական բժշկներից ոչ որ չը գիտէ բժշկել սօրի տէր ասված հիւանդութիւնը, այն ինչ մեր ժողովրդական բժշկները շատ միջոցներ ունեն այդ ցաւի դէմ և կատարելապէս բժշկում են այդ ցաւից մի քանի ժամվա մէջ։ Այժմ, օրինակ, կայ Թիֆլիսում մի աղուկեցի հայ, որ շատ աջող կերպով է բժշկում այդ ցաւից։ Խորհուրդ կը տալինք պարսնի ներկայացնել իր գիւտը բժշկական ընկերութեանը։ Մենք հաւատացած ենք, որ եթէ մեր ուսումնական բժշկները այդքան հպարտ և այդքան ինքնահաւան չը լինէին, շատ բան կարող էին սովորել մեր ժողովրդական բժշկներից։

Մի վարժուհի, որ աւարտել է ուսման ընթացքը Թիֆլիսի Գալանեան օրիորդաց դպրոցում, խնդրում է մեզ յայտնել, որ ցանկանում է մասնաւոր դասեր տալ։ Հարցէի մասին կարելի է անտեղիանալ Կենտրոնական դրամատաւորութեան, Արծրունու տանը, Գլխորդի փողոցի վրա։

Շնորհակալութեամբ ստացանք Վերջանուր աշխարհագրութիւնս դասագիրք հայոց դպրոցների համար, առաջին տարի, նախադիտելով։ Այդ գրքիցի հեղինակը պ. Ն. Սիմեոնեանցն է։ Գրքը տպված է Թիֆլիսում Բոլմանէն Մարտիրոսեանի տպարանում, Ներկայ 1880 թվին։ Դա հրատարակութիւն է Զ. Գրիգորեանցի «Եկովկանեան դրամատաւորութեան և ինչքան կարողացանք նկատել վատ չէ կազմած և բաւական լաւ յարկաբեցած է մեր դպրոցների մէջ դասաւորութեան համար։ Գիրքը 35 կօպ է, իսկ գումարով առնողներին 20% զիջումն է լինում։

Չանազան քաղաքներից և գիւղերից մենք ստանում ենք բողբոջներ, որոնցով յայտնում են տղէտ անկիրթ և միևնույն անգամ անբարոյական անձինքների քահանայ ձեռնադրվելու մասին։ Այս բողբոջները մենք թողնում ենք անտիպ մեր ընկերացողների ուշադրութիւնը չը ձանձրացնելու համար. բայց չը դիտենք, թէ մինչև երբ պէտք է չարանակիւն այս տեսակ անխաղաղութիւնները։

Շնորհակալութեամբ ստացանք Վերք օր ճանապարհին նուէր մանկանց, դրքիցի, հեղինակութիւն Ա. Գուլակեանցի—Թիֆլիս 1880 թ. Ա. Մելք-Շահնազարեանցի տպարանում։ Գրքիցի գինը 15 կօպէկ է։

«Փորձի» մայիսի տետրակը հրատարակեցաւ։ Այդ տետրակի մէջ յայտնված է որ ամառգրի խմբագիրը արտասահման է գնացել, այդ պատճառով «Փորձի» յունիսի, յուլիսի, օգոստոսի և սեպտեմբերի տետրակները միասին կը հրատարակվեն սեպտեմբեր ամսին։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄՈՐՈՆԻ



